ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոն
Բան. գիտ. թեկն., ասիստենտ
narine.markosyan1977@mail.ru

ԳՐԱԲԱՐԻ ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ V ԴԱՐԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր և արտահայտություններ. անցյալ դերբայ, կախյալ և անկախ գործառույթներ, դիմավոր բայի իմաստ, V դար, շարահյուսական պաշտոններ

Ключевые слова и выражения: причастие прошлого времени, зависимые и независимые функции, значение личного глагола, V век, синтаксические позиции

Key words and expressions: past participle, dependent and independent functions, finite verb meaning, V century, syntactic positions

Հին հայերենի անցյալ դերբային բնորոշ է բազմիմաստությունը, որն էլ նրան հնարավորություն է տալիս շարահյուսական մակարդակում դրսևորել և՛ անկախ, և՛ կախյալ դերբայներին բնորոշ հատկանիշներ: Քանի որ այն **եմ, լինիմ** բայերի համապատասխան ձևերով կազմում է բաղադրյալ ժամանակաձևեր՝ սահմանական եղանակի ներկա, անցյալ, ստորադասական եղանակի ապառնի, հետևաբար նախադասության մեջ կիրառվում է իբրև պարզ ստորոգյալ: Անկախաբար կիրառվելիս նշյալ դերբայը գործածվում է ինչպես դիմավոր բայի իմաստով, այնպես էլ շարահյուսական տարբեր պաշտոններով: Հոլովվում է՝ ենթարկվելով **ո** հոլովման, և կարող է ցուցաբերել հոլովման հարացույցի միավորներից յուրաքանչյուրին բնորոշ գործառույթներ՝ հանդես գալով հարակատարի, երբեմն ենթակայականի դերբայական իմաստներով: Ուստի անհրաժեշտ ենք համարում վկայել բնագրային փաստեր, դրանք դասդասել և խմբավորել ըստ նրանց դրսևորած շարահյուսական-կիրառական մի շարք առանձնահատկությունների:

ա) **Անցյալ դերբայն իբրև ենթակա**: Ուղղական հոլովով հանդես է գալիս որոշյալ և անորոշ առումներով՝ երբեմ նաև **հոգնանիշ** ձևույթով. «Եւ **ասացեալքն** ի թագաւորէն կատարէին առ վաղիւն» (Փարպ., 108): «Եւ ժողովեցան առ զօրավարն Մանուէլ ամենայն **ցրուեալք** երկրին....» (Բուզ., 380): «....թագաւորքն և **թագաւորեալքն** ընդ Քրիստոսի, որով և հաշտիք դուք

ընդ Աստուծոյ ի ձեռն մահու Որդւոյ նորա» (Ագ., 326): «Եւ զայն ոչ կարաց իմանալ **ցնորեալն»** (Եղ., 100): «Եւ գովելիք են, որպէս **իմաստասիրեցեալքն**» (Խոր., 10):

բ) **Անցյալ դերբայն իբրև որոշիչ**: Ուղղական հոլովով անցյալ դերբայը գործածվում է նաև որոշչի պաշտոնով: Այս կառույցներում սա համարժեք է հարակատար դերբային: Սա քերականագիտության մեջ արժևորվում է իբրև դերբայի ածականական գործառույթ: Այսպես՝ Վ. Չալըխյանը նշում է. «Ընդունելության անցեալն իբրև ածական՝ (այսինքն գոյականի որպիսութիւն ցուցընող) կը հոլովի եզակի ու հոգնակի ըստ կանոնի հասարակ ածական անուանց. և ուր պէտք ըլլայ՝ յօդ կառնու: Գոյականին նախադաս ըլլալով ալ շատ անգամ մէկտեղ կը հոլովի: Իսկ իբրեւ ստորոգելի (ուղղ. կամ հյց.՝ խնդիր բնութեան) կրնայ եզակի ալ յոգնակի ալ դրուիլ»[1]:

Մեր կարծիքով այսպիսի գործածությունները պիտի դիտել ոչ թե դերբայի՝ ածականական գործածություն, այլ անցյալ դերբայի անկախ գործածություններից մեկը: Քանի որ այն արտահայտում է նաև հարակատար դերբայի իմաստ, ուստի կարող է գործածվել որոշչի պաշտոնով, ինչպես՝ **ալիւր աղացեալ** նշանակում է **աղացած կամ աղացված ալյուր**: Հմմտ. «....մի ընկղմեսցի նաւ հաւատոց մերոց ի մէջ **ալեկոծեալ ծովու** մեղաց» (Եղ., 306): «Ահա թագաւոեալք, որք պարծեցան ի **խաչելեալ Փրկիչն**....» (Ագ., 324): «....բարբառէին **գեղգեղեալ խանդաղատությամբ**» (Փարպ., 190):

Նշված օրինակներից պարզ է դառնում, որ անցյալ դերբայը թարգմանվում է հարակատար դերբայի հատկանշային իմաստով:

Անցյալ դերբայով արտահայտված որոշիչը ածական որոշչից տարբերվում հետևյալ հատկությամբ. անցյալ դերբայ որոշիչը և՛ նախադաս, և՛ հետադաս դիրքերում մեծ մասամբ հոլովով ու թվով համաձայնում է իր որոշյալի հետ (մինչդեռ բազմավանկ ածական որոշիչը նախադաս լինելու դեպքում շատ քիչ է համաձայնում), ինչպես՝ «....և ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ **ամպոց շփոթելոց** (խառնված ամպերի)՝ ճայթմունս գործէր....» (Եղ., 234): «Եւ զոմն յառաջին **կապելոցն Պարսկաց** լուծեալ և ածեալ զառաջեաւ նախարարացն» (Եղ., 162):

Սակայն հանդիպում են օրինակներ, որտեղ նախադաս դերբայական որոշիչը հոլովով ու թվով չի համաձայնել իր լրացյալի հետ, ինչպես՝ «....և առ յոյժ թանձր **անկեալ դիականցն** իբրև զքարակոյտս դերբկաց երևէին» (Եղ., 238):

---

[1] Վ. Չալըխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի., Վիեննա, 1885, էջ 425:

Անցյալ դերբայով արտահայտված հետադաս որոշիչը հազվադեպ կարող է չհամաձայնել իր որոշյալի հետ, օրինակ՝ «Ընդունէր **զպատարագսն բերեալ** ի կայսերէ» (Սեբ., Ի Զ)[2]: «...բայց զիւրոց նաժշտացն **կերակուրս արարեալ** և կամ զնոցին **պարզեալ զգինի** ճաշակէր» (Բուզ., 192):

«Երբ անցեալն հետը խնդիր կամ՝ ուրիշ յարակից բառեր ունի, գոյականը առաջ կը դրուի»,-գրում է Վ. Չալբխյանը՝ բերելով հետևյալ օրինակները՝ «Զաւակք **օրհնեալք յԱստուծոյ**»: «Վարդենի **բուսեալ ի գնացս** ջուրց»: «Շունք կերակրին ի փշրանաց **անկելոց ի սեղանոյ**: Սակայն հեղինակը այնուհետև բերում է օրինակներ, ուր անցյալ դերբայը իր լրացումների հետ ունի նախադաս գործածություն, ինչպես՝ **Զմնացեալ** ճարակն **ի ձէնջ** առ ոտն կոտորէիք: **Յիշատակեալ ի մէնջ** այրս Կղեմէս: Ըստ հեղինակի՝ այսպիսի կառույցը գրաբարին հատուկ չէ[3]:

Սովորաբար անցյալ դերբայով արտահայտված որոշչի շարադասությունը ազատ է. այն կարող է լինել և՛ նախադաս, և՛ հետադաս: Սակայն, երբ անցյալ դերբայով արտահայտված որոշիչը նախադաս լրացումներ է ունենում, ապա այն դրվում է լրացումից հետո, օրինակ՝ «....և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն **երկոցունց անկելոց»** (Եղ., 238):

գ) Անցյալ դերբայը նախադասության մեջ գործածվում է որպես **հատկացուցիչ**, ինչպես՝ «Եւ յետ այսորիկ էառ իւր զկինն **սպանելոյն** զՓառանձեմն» (Բուզ., 192): «Իսկ նա իբրև գիտաց, եթէ ոչ կարեմ քակել զհաստատութիւն **միաբանելոցն**» (Եղ., 176): «....սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմոնչիւն **խոցելոցն** և զմոնչիւնս **բեկելոցն**....և զթաքուստ **լքելոցն**» (Ագ., 240): «....ոչ ոք գոյր այնուհետև ի մէջ գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդք **մնացելոցն**» (Ագ., 240): «Օրհնեա զմեզ, սուրբ հայր մեր. դու ես **բերան հանգուցելոցն**» (Եղ., 382):

Հատկացուցիչն ընդհանրապես ունի հետադաս կիրառություն, բայց հազվադեպ հանդիպում են նախադաս կիրառության դեպքեր, ինչպես՝ «Կասկածէր....զանարժան **գոռոզացելոցն** բեկանել **զսիրտս**» (Փարպ., 63): «Երանելիս այս բարձեալ **զաւանդելոցն պատիւ**» (Կոր., 36):

Վ. Քոսյանը նշում է, որ անցյալ դերբայը գոյական անդամի լրացում է դառնում երկու ձևով: Մի դեպքում այն հանդես է գալիս փոխանվանաբար և գործածվելով սեռական հոլովով՝ դառնում է հատկացուցիչ՝ հիմնականում հետադաս կիրառությամբ: Երկրորդ դեպքում անցյալ դերբայը գոյականի լրացում է դառնում ածականաբար՝ ձեռք բերելով տվյալ

[2] Վ. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980, էջ 63:
[3] Վ. Չալբխեան, նշվ. աշխ., էջ 427:

խոսքի մասին բնորոշ առանձնահատկությունները[4]: Այսինքն՝ ածական որոշիչը հետադաս կիրառվելիս հոլովով ու թվով համաձայնում է լրացյալին, իսկ նախադաս դիրքով այն կարող է նաև չհամաձայնվել:

Անցյալ դերբայը նախադասության մեջ կարող է հանդես գալ շարահյուսական այն բոլոր պաշտոններով, որոնք բնորոշ են գոյականին և ածականին, և դրանք ոչ թե փոխանվանական գործածություններ են, այլ գրաբարի անցյալ դերբային բնորոշ գործառույթներ:

դ) Անցյալ դերբայը հանդիպում է նաև **բացահայտչի** գործառույթով. «Այլ մեք **ապրեալքս** զորութեամբ Աստուծոյ, և հաստատեալք հաւատովքն ի յոյսն Քրիստոսի, որ եկն և էառի ի սուրբ կուսէն զմարմին մերոյ բնութեանս» (Եղ., 174): «Այլ զամենայն ի ձեր **աշակերտելոցդ** յօգուտ փութամբ կատարել ըստ հրամանի աստուածութեանն....» (Ագ., 140): «Եւ մեք....**ուրացեալքս՝** և **զոջացեալքս**, **յանցուցեալք՝** և ողորմութիւնդ **ապաւինեալքս**, **գլորեալքս՝** և **կանգնեալքս**....» (Փարպ., 144):

ե) Անցյալ դերբայը դառնում է նաև բայական անդամի լրացում՝ **խնդիր և պարագա**[5].

1. **ուղիղ խնդիր՝** «....և առաջի եդեալ նոցա **զաւանդեալս** մարգարէականս, որ վասն նորա վկայեալ» (Ագ., 272): «....և **զմնացեալսն** գերի առեալ տանէին» (Բուզ., 254):

«Եւ որ հայհոյէրն զՔրիստոս, և ուրացուցանէր ի նմանէ **զհաւատացեալս**...» (Եղ., 176): «Եւ յորդորէր զամենայն **աշակերտեալսն** առ բարեացն քաջութիւնսն» (Կոր., 124): «Եւ իբրև տեսին զնա **յարձակեալ** ի վերայ իրեանց, փախեան ելին ի քաղաքէ....» (Փար., 30): «Դու Ի դեպ՝ անցյալ դերբայի գործածությունը ուղիղ խնդրի պաշտոնով բավական հաճախ է հանդիպում մատենագիրների երկերում:

2. **հանգման անուղղակի խնդիր՝** «Իսկ Արշակ թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամին և հաւանէր **զասացելոցն»** (Բուզ., 200):

3. **միջոցի անուղղակի խնդիր՝** «....զոր **առաքելովքն** քարոզեցեր քոց ստացուածոց յաշխարհի» (Բուզ., 270):

4. **միասնության խնդիր՝** «....մազպանն պարսիկ որ երթայ յաշխարհն՝ կնաւ երթայ և որդւովք, դրամբ և **սիրելովք**, ծառայիւք և աղախնեօք» (Փարպ., 430):

5. **անջատման անուղղակի խնդիր՝** «....յորում ոչ զոք յուսումնասէր **ժողովելոցն** տեսանէին օգտեալ ի վարդապետութենէ....» (Փարպ., 36):

---

[4] Տե՛ս Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 63:

[5] Տե՛ս Վ. Քոսյան, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Եր., 1990, էջ 458-459:

6. **ձևի պարագա**՝ «Ամենեքեան ի դժնէ տրտմութենէն **զուարթացեալք**, յուրախութիւն դառնային» (Բուզ., 172): «**Վասն** որոյ **զաղաղակ բարձեալ**՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց» (Եղ., 238): «....բայց միայն Մերուժանն ի տաճիկ ձի **նստեալ** փախչէր» (Բուզ., 244): «Ապա և զօրքն Հայոց **խրոխտացեալ** հանդերձ իւրեանց զօրավարաւն Վասակաւ, գազանաբար առիւծաբար դէմ ընդդէմ յարձակէին» (Բուզ., 246): «Ապա ի Դարանաղեաց գաւառին **լկնեալ** յարձակեցաւ Մուշեղն» (Բուզ., 286): «Եւ այնպէս **նեղեալ** շտապէր» (Ագ., 286):

Այս կառույցներում անցյալ դերբայը իր լրացման հետ կարող է արտահայտել նաև վիճակի իմաստ:

Անցյալ դերբայը գործածվում է **իբրև**, **առ, ընդ, ըստ, վասն, (ի) վերայ, մէջ** նախդիրների և նախադրությունների հետ՝ նախադասության մեջ հանդես գալով շարահյուսական տարբեր պաշտոններով[6]: Այսպես՝ **վասն** նախադրության հետ անցյալ դերբայն արտահայտում է **պատճառի** պարագայի իմաստ. ինչպես՝ «Քանզի վասն միոյ կորուսելոյ ոչխարին եկն ի խնդիր, վասն այնորիկ և նոքա խնդակիցք լինին **վասն** միոյ **դարձելոյ** յապաշխարութիւն» (Ագ., 312):

Իբրև նախադրության հետ արտահայտում է ժամանակի պարագայի իմաստ, ինչպես՝ «**Իբրև ուսեալ** և յոյժ **խրատեալ**՝ զգեղեցիկ հոգ է անձին....» (Ագ., 332): «Եւ նա **իբրև** զայս հրամանս **ընկալեալ** ի ձեռն առնոյր, յղէր առ Մարդպետն Հայր դաւով» (Բուզ., 292): «Իսկ նորա յոտն կացեալ, և ի քուն ոչ մտեալ, այլ զձեռն **իբր ի վեր ամբարձեալ**՝ կայր աղօթս» (Եղ., 302): «Զոր **իբրև լուեալ** արքային, ասէ» (Բուզ., 192):

Առ նախդրի հետ անցյալ դերբայը դառնում է **հանգման անուղղակի խնդիր**՝ «Նոյնպէս և **առ ցասուցեալն և տրտմեալն**....ոք մատչի....» (Կող., 44):

Ի վերայ նախադրության հետ դառնում է **հանգման** կամ **մատուցման անուղղակի խնդիր**՝ «Ի կիր արկանէ այնուհետև նշանակել միանգամայն զփորձութիւնս **ի վերայ յարձակեալս**» (Կոր., 84): «....զի մի լուեալ յարքունիսն՝ իբրև զհուր բորբոքեսցի բարկութիւն **ի վերայ մնացելոցն»** (Ագ., 314):

Մէջ նախադրության հետ տեղի պարագայի իմաստ է արտահայտում է՝ «Եւ ի բազում յայլ տեղիս զողաբար սողացաւ և եմուտ իբրև զօձ ի **մէջ ամրացելոցն**» (Եղ., 184):

Ըստ նախադրության հետ դառնում է **հիմունքի** պարագա՝ «Իսկ Տէրն, **ըստ ասացելոյն** իւրոյ, յարուցեալ յաւուրն երրորդի» (Ագ., 264):

---

[6] Հմմտ. Թ. Շահվերդյան, Գրաբարի դերբայները. Ձևաբանություն և շարահյուսություն, Երևան, 2001, էջ 136-137:

Ինչպես գիտենք, ենթակայական դերբայ ունեն ոչ բոլոր բայերը: Ենթակայական դերբայ չի կազմվում **ի** լծորդության **չ**, **նչ** ածանցավոր, **ու** լծորդության **նում-չիմ** փոխանցումով բայերից և կրավորական սեռի բայերից: Այդ պատճառով էլ երբեմն անցյալ դերբայը գործածվում է ենթակայական դերբայի իմաստով: «Ընդ. ներկայ՝ կամ ներգործական բայի է և կամ՝ չեզոք.-կրավորական չկա գրաբար: Բայց ասկէ՝ շատ բայ կա որ **ող** եւ **իչ** մասնիկ չեն առնուր»,-գրում է Վ.Չալըխյանը և ապա ավելացնում. «Ընդուն. ներկայ չունեցող բայերուն շատ անգամ անցեալը կը գործածուի անոր տեղ»[7]: Վ. Չալըխյանի օրինակներից՝ Տեսանիցէք զորդի մարդոյ **եկեալ** ի վերոյ ամպոց (փոխանակ՝զի գայցէ): «Զիարդ դժուարին է **յուսացելոց** յինչս մտանել յարքայութիւն երկնից (փոխ. յուսացողաց)»[8]:

Հանդիպում են հետևյալ օրինակները՝ «...և ի **գերեալ** մոլորութեանցդ՝ (իսկ քեզ **գերող** մոլորություններից) դարձ փրկութեան» (Ագ., 406): «Իղձք բաղձացեալք ցանկալեացն զկամս **նաւելոցն** (**նավարկողների**) ի նաւահանգիստն հասուցանել՝ խնդություն է խաղաղութեամբ...» (Ագ., 6): «Իսկ **հաւատացեալքն** (**հավատացողները**) ճշմարտութեամբ ի Քրիստոս՝ ոչ ինչ երկմտութեամբ թերահաւատէին յառաջին խրատուէ սուրբ վարդապետացն իւրեանց» (Եղ., 96):

Վ. Չալըխյանը նշում է. «Երբեմն էլ աներեւութի վերջաւորութիւնը կը գտնուի եալ գրուած՝ ընդուն. անցելոյ նման», հեղինակի օրինակներից՝ «Սովոր են ըստ առաջի գերեզմանաց վէմ **փորեալ** (փորել): Դուք ահաւադիկ կամիք օտար տերանց **ծառայեալ**»: «Կամէր **յղեալ** դեսպանս»[9]:

Հարկ ենք համարում նշել, որ երբեմն էլ անցյալ դերբայն է գործածվում անորոշի փոխարեն. «Այսպէս եւ աներեւութին իւր անցելոյն հետ նոյնանալու նմանութեամբն՝ ուրիշ լծորդութեանց ալ իրական անցեալն երբեմն աներեւութի տեղ կանցնի. ինչպես. Դորին խրատդ անշնորհ **արարեալ** զդիսն իշխեաց»: «Յարեաւ Եսթեր **երթեալ** ի սենեակն արքայի (փոխ. յարեաւ երթալ)[10]:

Այսպիսով՝ անցյալ դերբայն իբրև անկախ դերբայ հանդես է գալիս ինչպես ուղիղ, այնպես էլ թեք հոլովներով թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումներով: Ուղիղ ձևով գործածվում է ենթակայի, որոշչի, բացահայտչի պաշտոններով. այս կիրառություններում այն արտահայտում է

---

[7] Վ. Չալըխեան, նշվ. աշխ., էջ 415-420:
[8] Նշվ. աշխ., էջ 420:
[9] Նույն տեղում. էջ 414:
[10] Վ. Չալըխեան, նշվ. աշխ.,. էջ 414:

հիմնականում հարակատար, երբեմն էլ ենթակայական դերբայների իմաստներ:

Թեք հոլովներում գործածվում է հատկացուցչի, բացահայտչի (եթե բացահայտյալը դրված է թեք հոլովով), հանգման և ուղիղ խնդիրների պաշտոններում: Հաճախ է գործածվում ձևի պարագայի պաշտոնում, իսկ **նախադրությամբ** և **նախդրավոր** կառույցներում՝ տեղի, ժամանակի, պատճառի պարագաների պաշտոններով:

Ստորև ներկայացնում ենք անցյալ դերբայի շարահյուսական կիրառությունների վիճակագրական աղյուսակ 1-200 էջի սահմաններում՝ ըստ 5-րդ դարի չորս մատենագիրների:

ԱՂՅՈՒՍԱԿ

V դար	ենթակա	որոշիչ	հատկացուցիչ	բացահայտիչ	ուղիղ խնդիր	հանգ. ամուրդ. խնդիր	միջոցի խնդիր	միասնության խնդիր	անջատման խնդիր	վերաբ. խնդիր	նպատ. պարագա	պատճ. պարագա	ձևի պարագա	ժամ. պարագա	տեղի պարագա	հիմունքի պարագա
Բուզանդ	15	81	10	1	32	20	1	1	3	-	1	2	155	26	2	2
Ագաթ	11	121	3	6	21	12	0	-	1	1	5	4	132	52	1	-
Փարպ.	13	117	4	6	32	4	0	-	6	1	2	-	407	102	1	3
Կորիւն	1	36	8	1	8	16	1	-	2	-	1	-	83	12	-	-

Ն. Մարկոսյան

Գրաբարի անցյալ դերբայի անվանական գործառույթները V դարի մատենագրության մեջ

Ամփոփում

Գրաբարի անցյալ դերբային բնորոշ է բազմիմաստությունը: Ուստի այն դրսևորում է և՛ կախյալ, և՛ անկախ դերբայներին բնորոշ հատկանիշներ: Կախյալ գործառույթով գործածվում է **եմ, լինիմ, կամ, ունիմ** օժանդակ բայերի հետ՝ մասնակցելով վերլուծական ժամանակաձևերի կազմությանը: Անկախաբար կիրառվելիս անցյալ դերբայը հանդես է գալիս ինչպես

դիմավոր բայի իմաստով, այնպես էլ շարահյուսական տարբեր պաշտոններով՝ դառնալով ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիրներ և պարագաներ: Պայմանավորված անցյալ դերբայի իմաստային առնձնահատկություններով՝ ձևի պարագայի և որոշչի կիրառությունները V դարի մատենագրության մեջ ունեն գործածության բարձր հաճախականություն:

Н. Маркосян

Номинальные функции причастия прошедшего времени грабара в литературе V века

Резюме

Причастие прошедшего времени в Грабаре характеризуется многосмысленностью. Следовательно, оно показывает характеристики, типичные как для личных, так и для безличных глаголов. Оно используется с зависимой функцией со вспомогательными глаголами եմ, լինիմ, կամ, ունիմ, участвующими в составлении аналитических времен. При применении независимо, причастие прошлого времени действует как со значением личного глагола, так и в различных синтаксических позициях, становясь подлежащим, определением, атрибутом, приложением, дополнением и обстоятельством. Из-за семантических особенностей причастия прошлого времени, использование обстоятельства образа действия и определения в литературе V века имеет высокую частоту применения.

N. Markosyan

Nominal functions of past participle in grabar in the bibliography of V century

Summary

The past participle of Grabar is characterized by multi-sense. Therefore, it shows characteristics, typical to both dependent and independent verbs. It is used with dependent function with the auxiliary verbs am (եմ), will be (լինիմ), be (կամ), have (ունիմ) participating in the formulation of analytical terms. When applied independently, the past participle acts both in the sense of the finite verb and in various syntactic positions, becoming subject, determinant, attribute, apposition, objects and adverbials. Due to the semantic features of the past participle, the uses of adverbial of manner and determinant in the V century bibliography have a high frequency of application.

Խմբագրություն է ուղարկվել 01.07.19
Հանձնարարվել է գրախոսության 08.07..19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19